

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 256-Ա


20 օգոստոսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N°298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 14-ի N 1847-Ա, N 1957-Ա, N 1963-Ա, N 1966-Ա, N 1972-Ա, 2020 թվականի օգոստոսի 18-ի N 2002-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 16-18-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Արթուր Ավետիսյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 12.
 - 2) «Գագիկ Խառատյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Երվանդ Քոչարի փողոց 4/9.
 - 3) «Վահագն Դիլանյան» Ա/Ձ՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 61.
 - 4) «Մարիամ Կայսերյան» Ա/Ձ՝ ք. Էջմիածին, Վ. Առաջին 1/2Ա.
 - 5) «Սիրանուշ Ղազարյան» Ա/Ձ՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 6.
 - 6) «Էվելինա Մելիքյան» Ա/Ձ՝ ք. Էջմիածին, Վ. Առաջին 31/1:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 20/08/20 18:38:00 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ